Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ալեքսանդր Պուշկինի անվան համար 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Գրականություն

Թեմա՝ Միջառարկայական կապերի ապահովումը իններորդ դասարանում Մովսես Խորենացու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն ուսումնասիրելիս

Վերապատրաստող, մենթոր՝ Գայանե Մանուկյան

Ուսուցիչ՝ Նարինե Նավասարդյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն....3
2. Ինտեգրված դասի նշանակությունը....4
3. Միջգիտակարգային կապերը գրականության դասին....6
4. Միջառարկայական կապերի իրականացումը Մ. Խորենացու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն ուսումնասիրելիս....8
   Գրականություն և պատմություն....8
   Գրականություն և դիցաբանություն....10
   Գրականություն և տոմարագիտություն....11
   Գրականություն և գրականագիտություն....12
   Գրականություն և հայոց լեզու....13
   Գրականություն և աշխարհագրություն....14
   Գրականություն և երաժշտություն....17
   Գրականություն և տոներ, ծեսեր....18
   Գրականություն և կերպարվեստ....18
5. Հետազոտություն....20
6. Եզրակացություն....22
7. Օգտագործված գրականության ցանկ....23
8. Հավելված....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր խիստ արդիական է միջառարկայական կապերի ուսումնասիրության թեման, քանի որ ցանկացած գիտակարգ գոյություն ունի այլ գիտակարգերի հետ համատեղ միջավայրում: Վերջին տարիներս ձևավորվել են համակցված գիտակարգեր, ինչպիսիք են՝ կենսաքիմիան, կենսաֆիզիկան, կենսակիբեռնետիկան, ֆիզիկական քիմիան, բժշկական ռադիոլոգիան, որոնք կարևոր նշանակություն ունեն մարդկության կենսապայմանների զարգացման գործընթացում:

Դպրոցական ուսուցումը ևս պետք է համապատասխանի գիտատեխնիկական առաջընթացի արդի պահանջներին:

Աշխատանքի **նպատակն** է դասավանդման գործընթացում միջառարկայական կապերի կարևորության լուսաբանումը: **Խնդրո առարկան** է՝ <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> ստեղծագործության մեջ միջառարկայական կապերի ուսումնասիրումն ու վերհանումը, ինչը կնպաստի աշակերտների աշխարհընկալման ընդլայնմանը:

Միջգիտակարգային ուսուցումը տարբեր գիտակարգերի ընդհանուր գիտելիքների համակցումն է որոշակի սահմաններում, որը համապատասխանում է ուսումնական խնդիրների արդյունավետության բարձրացման նպատակին:

Միջառարկայական կապերը կարևորվել են դեռևս անցյալում: Յան Ամոս Կոմենսկին Ջոն Լոկին առաջարկում էր այնպիսի գիտակարգերի համակցումը, ինչպիսիք են՝ քերականությունն ու փիլիսոփայությունը, գրականությունն ու փիլիսոփայությունը, պատմությունն ու աշխարհագրությունը:

Միջգիտակարգային ուսուցմանը մեծ տեղ են հատկացրել Կրուպսկայան, Ուշինսկին, Կոմենսկին և այլք:

Արդի փուլին բնորոշ է գիտակարգերի փոխներթափանցումը, որը բարձրացնում է աշխարհաճանաչողությունը:

Այսօր դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումն առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց աշակերտների հետաքրքրության բարձրացման:

Միջգիտակարգային կապերի ուսումնասիրությունը աշակերտներին հնարավորություն է տալիս տարբեր առարկաներից ստացած գիտելիքները համախմբելուն, առօրյա կյանքում գործածելուն: Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել գրականության և մայրենիի դասերինմայրենի լեզվի միջոցով: Հետազոտական այս աշխատանքում կփորձենք ներկայացնել միջգիտակարգային կապերը վերը նշված թեմայի շրջանակում:

Ինտեգրված դասի նշանակությունը

Ինտեգրված ուսուցման վերաբերյալ անցյալում արտահայտվել են Կոմենսկին, Պեստալոցցին, Սուխոմլինսկին: Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն զարգացնող է և բազմաբաղադրատարր, նպաստում է նաև թե՛ սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողների զարգացմանը, թե՛ միջառարկայական կապերի կիրառմանը:

Ինչպես նշում է Ե. Ա. Եկժանովան.<<Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ կրթական գործընթացում ներառելով բոլոր մասնակիցներին>>:

Ըստ Կրաևսկու՝ դպրոցականների առաջադիմության անկումը խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է ոչ միայն մանկավարժական, այլև գիտական մոտեցում :

Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում, որոնց միջոցով դասավանդման ընթացքում աշակերտները բազմակողմանի գիտելիքներ կկարողանան ձեռք բերել:

Այս հետազոտական նյութի շրջանակներում կանդրադառնանք ինտեգրված ուսուցման այն բաղադրատարրին, որը, հիմնվելով միջառարկայական կապերի կիրառման վրա, զարգացնում է սովորողների պոտենցիալ հնարավորությունները՝ նպաստելով նրանց բնականոն ճանաչողության դրդապատճառների խթանմանը:

Ինտեգրված դասերը կարելի է կառուցել մեկ առարկայի հիմքի վրա, մյուս առարկաները կօգնեն ավելի խորը ուսումնասիրելու այդ առարկայի կապերը մյուս առարկաների և առօրյա կյանքի հետ, և աշակերտները հնարավորություն կունենան իրենց ստացած գիտելիքները գործնականում կիրառելու: Այսինքն՝ ինտեգրված ուսուցման հիմքը բազմաբնույթ մտածելակերպի զարգացումն է, որը խթանում է աշակերտի գործնական կարողությունների զարգացումը:

Ինտեգրված դասը նպաստում է դասի մեջ ընդգրկված երևույթների, իրադարձությունների, գործընթացների ամբողջությունն ու փոխկապվածությունը բացահայտելուն, միջառարկայական կապերն իրագործելուն:

Ինտեգրված ուսուցման մեջ գլխավորը թեման է, և ուսուցչի ստեղծագործական կարողություններն ու հմտությունները նպաստում են դասարանական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Նման դասերն ավելի հետաքրքրական են: Անգամ վատ սովորող աշակերտը կարող է ներգրավվել նման դասապրոցեսում, հետաքրքրասիրություն ցուցաբերել և լավ արդյունքներ գրանցել:

Ինտեգրված դասը հնարավորություն է տալիս՝

ա . առանձին թեմաներն ուսումնասիրելու ժամկետը կրճատելուն.
բ . տարբեր թեմաների սահմաններում նույն դասանյութը չկրկնելուն.
գ. դասը ավելի հետաքրքիր և բազմաբովանդակ դարձնելուն.
դ. թեման համապարփակ ներկայացնելուն:

Ինտեգրված դասին կարելի է նաև այլ նպատակաուղղվածություն հաղորդել, օրինակ՝ կազմակերպել՝

ա. դաս – ուղևորություն.
բ. դաս –հետազոտություն.
գ. դաս – կոնֆերանս.
դ. դաս –էքսկուրսիա և այլն:

Կարծում եմ՝ ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքների համակցումը, նպաստելու է սովորողների հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և նրանց կայուն զարգացման իրականացմանը:Այն դառնալու է կրթության որակի բարձրացման և նոր հասարակության ձևավորման հիմնական գրավականը: Ապագայում թերևս բոլոր դասերն այդպես կանցկացվեն:

Միջգիտակարգային կապերը գրականության դասին

Միջգիտակարգային կապերը նպաստում են աշակերտների ընդհանուր աշխարհաճանաչողությունը զարգացնելու գործընթացին, իսկ տարբեր ուսումնական առարկաները օգնում են մեկը մյուսին:

Արդյունքում գիտելիքները դառնում են ընդհանրացված, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս ընդհանուր պատկերացում կազմելու կյանքում տեղի ունեցող տարբեր երևույթների մասին և գիտելիքներն առօրյա կյանքում կիրառելուն:

Երբ որևէ գործ ենք ձեռնարկում, ինքներս մեզ հարցնում ենք. <<Իսկ ինչո՞ւ է դա հարկավոր>>:

Կարծում եմ՝ մեր ամբողջ ուսումնական գործընթացը այնպես է կազմակերպված, որ աշակերտներն ստանան բազմակողմանի գիտելիքներ՝ ցանկացած բուհ ընդունվելու համար:

Մենք պետք է սովորեցնենք սովորել և հետաքրքրություն առաջացնենք մարդկային տարբեր գործունեությունների նկատմամբ: Աշխարհն ամբողջական է, և մենք այն տրոհում ենք առանձին մասերի, իսկ միջառարկայական կապերը այն ավելի ամբողջական են ներկայացնում:

Ցանկացած առարկայի դասավանդման գործընթացում միջառարկայական կապերին դիմելն արդյունավետ կարող է լինել: Երբ աշակերտը գիտակցում է, որ դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքը կարող է կիրառել նաև հաջորդ դասին, ավելի ուշադիր է լսում դասը, մասնակցում քննարկմանը, գիտելիքն ամրապնդում է և ակտիվ մասնակցություն ունենում նաև հաջորդ դասին:Սովորողն ինքն էլ փորձում է կապ գտնել տարբեր առարկաների միջև, հասկանալ գիտելիքի կարևորությունը, առարկաների փոխկապվածությունը կյանքում:

Ուսումնակրթական գործընթացում միջառարկայական կապերը դիտարկելու շնորհիվ դասն ավելի հետաքրքրական է դառնում, ձևավորվում են համակարգված գիտելիքներ, բարձրանում է ճանաչողական հետաքրքրվածությունը, զարգանում է մտածելակերպը, ձևավորվում է աշխարհայացքը, ինքնատիրապետումը, իջնում է սովորողների լարվածությունը, բարձրանում է ինքնագնահատականը. շատ կարևոր է, երբ սովորողը հավատում է իր ուժերին:

Միջգիտակարգային կապերը հնարավորություն են տալիս որակապես բոլորովին նոր մակարդակի հասցնելու աշակերտների կրթությունն ու դաստիարակությունը, որպեսզի նրանք կարողանան գիտելիքները և ձեռք բերած ճանաչողությունն ու հմտությունները կիրառել իրականության մեջ:

Այսպիսով՝ միջգիտակարգային կապերը աշակերտների կրթության և դաստիարակության դժվարին և պատասխանատու գործընթացում կարևոր նշանակություն ունեն:

Միջառարկայական կապերի իրականացումը Մ. Խորենացու «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն ուսումնասիրելիս

Այժմ փորձենք նշված դասանյութի շրջանակում անդրադառնալ միջառարկայական և ներառարկայական կապերին:

Գրականություն և պատմություն

Փորձենք պարզել, թե ինչ ընդհանրություն կարող է լինել պատմագրության և գրականության միջև: Երկու դեպքում էլ գործ ունենք գրավոր տեքստի հետ:Հիմնական տարբերությունը պատմաբանի և գրականագետի առջև դրված խնդիրներն են:Պատմաբանի խնդիրն է անցյալի ճշգրիտ և օբյեկտիվ պատկեր ստեղծելը, փաստագրական աղբյուրներին դիմելը, իսկ գեղարվեստական ստեղծագործության հեղինակի նպատակը ստեղծագործական գաղափարն իրականացնելն է՝ արթնացնելով ընթերցողի հետաքրքրասիրությունը, որի համար պարտադիր չէ միշտ իրական տվյալներին հետևելը:

Պատմությունն ու գրականությունը սերտորեն առնչվում են միմյանց:

Ցանկացած արձակ ստեղծագործության հեղինակ չպետք է անտեսի պատմական մանրամասների իմացությունը: Պատմաբանն էլ ամբողջական պատկերացում է կազմում անցյալի մասին՝ ուսումնասիրելով նաև գրական ստեղծագործությունները:

Պատմական տեղեկությունները գրական ստեղծագործության մեջ գործածելը լուրջ հմտություններ է պահանջում: Իսկ ինրպե՞ս կարող է գրականության դասն առնչվել պատմությանը: Ստորև ներկայացնենք վերը նշված դասի ընթացքը:

<<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> առասպելն ուսումնասիրելուց առաջ սկսում ենք ուսումնասիրել Մովսես խորենացու կյանքը, ապրած ժամանակաշրջանը: Պարզում ենք, թե ինչ դեպքեր և իրադարձություններ են տեղի ունեցել պատմական այս ժամանակահատվածում, ինչպիսի՞ տրամադրություն է գերիշխել միջավայրում, ո՞ւմ պատվերով և ե՞րբ է գրվել <<Հայոց պատմությունը>>, ո՞ր տարիքում է Խորենացին գրել այդ աշխատությունը,միտքը շարադրելիս ի՞նչ սկզբունքներով է առաջնորդվել…

Խորենացին պարսավել է մեր առաջին թագավորներին, որոնք չեն մտահոգվել <<իրենց ժամանակները գրով և պատմությամբ հաստատելու մասին>>: Դրվատել է նախնի մատենագիրներին, որոնք ծանր աշխատանքով տարբեր լեզուներով

ստեղծեցին պատմական գրվածքներ, որոնցից ինքն օգտվում էր պատմությունը շարադրելիս:

Այնուհետև ծանոթանում ենք <<Հայոց պատմության>> գրքերին և գրքերում ներկայացված պատմական կերպարներին ու ժամանակաշրջանին, պարզում ենք մեր ազգաբանությունը, որը Խորենացին համարում է հավաստի. <<Եվ սա ճշմարիտ է, ոչ ոք չկասկածի>>:

Խորենացու աշխատության միջոցով ծանոթանում ենք հայրենաշեն հայոց արքաներին, նրանց գործունեությանը, զուգահեռաբար դասը կապում ենք պատմության դասերին ձեռք բերած գիտելիքների հետ, որի միջոցով ամրապնդվում է միջառարկայական կապը. աշակերտները թեման ամփոփում են լրացուցիչ տեղեկություններով:

Հետո անդրադառնում ենք դասի բուն թեմային:

Արդյոք առասպելում նկարագրված ժամանակահատվածը համապատասխանո՞ւմ է ճշգրիտ ժամանակաշրջանին: Այս հարցում կան տարակարծություններ: Ըստ Խորենացու՝ Արա Գեղեցիկը հայոց արքա Արամի որդին է:

Կան նաև աքքադական և նորխուռիական արձանագրություններ, որոնք փաստում են , որ Արա Առաջինն իշխել է մ.թ.ա. 786-764թթ., իսկ Շամիրամն ապրել է մինչև մ.թ.ա.782թ.-ը՝ Արայի թագավորության սկզբնական շրջանում: Ըստ այդ արձանագրությունների՝ Շամիրամն ապրել է Մենուայի՝ Արայի հոր իշխանության 24 տարիների ընթացքում: Դա նշանակում է, որ եթե անգամ ենթադրենք, որ նրանք հանդիպել են, ապա Շամիրամը եղել է զառամյալ հասակում: Սրանից կարող ենք ենթադրել, որ Շամիրամը Մենուային է ճանաչել, որը մահացել է պատերազմի ժամանակ՝ մ.թ.ա.786թ.-ին:

Քանի որ պատմական դեպքերը ժողովրդի հիշողության մեջ հարյուրամյակների ընթացքում բանավոր են փոխանցվել,ուստի կարելի է պատկերացնել, որ ժամանակի ընթացքում դեպքերը որոշ չափով կարող էին աղավաղվել: Արդյունքում՝ Մենուայի մի շարք գործեր վերագրվել են Արային, Շամիրամի ջրանցքի կառուցումը, որը Մենուան է կառուցել, վերագրվել է Շամիրամին:[1]

Ուսումնասիրում ենք առասպելը նաև ըստ այլ պատմիչների:

[1] Իշխանյան,Ռ., Պատկերազարդ պատմություն հայոց, Արևիկ, Երևան, 1989:

Պարզում ենք, որ հնում շատ առասպելներ են հյուսվել Շամիրամի(Շամշիադադ Հինգերորդի կինը, Ք.ծ.ա.823-811թթ.) անվան հետ կապված:

Այդպիսի առասպելներից մեկն էլ գրի է առել Խորենացին:

Ըստ հույն պատմիչների՝ Շամիրամը համարվել է սիրո և պտղաբերության ասորական Դերկետո (Աստարտա) աստվածուհու դուստրը:Իբր մորից լքված մանկահասակ Շամիրամին լեռներում կերակրել են աղավնիները, և խնամել են հովիվները: Ըստ այդմ՝ Սեմիրամիդա հունարեն նշանակում է լեռնային աղավնի:

Հավանական է նաև անվան՝ Սեմի դուստր բացատրությունը:

Ըստ ավանդազրույցի՝ Շամիրամն ամուսնացել է Բաբելոնի արքա Նինոսի խորհրդական և Ասորիքի կուսակալ Օաննեսի հետ, այնուհետև դարձել է Նինոսի կինը:

Վարել է տարփատենչ և զեխ կյանք, Նինոսի մահից հետո վատնել է արքունի գանձերը, որի պատճառով էլ հալածվել է որդուց՝ նինուասից, վերածվել է աղավնու և համբարձվել երկինք, դարձել աստվածուհի:

Ըստ մեկ այլ տարբերակի՝ հալածվել և սպանվել է Նինուաս որդու կողմից կամ վերածվել քարե արձանի:

Այսպիսով՝ պարզում ենք,որ Շամիրամի մասին առասպելներ ու ավանդազրույցներ շատ կան, տարբերակներ հանդիպում են նաև հին աշխարհի այլ ժողովուրդների մոտ:

Դիտարկենք գրականության կապը նաև մյուս առարկաների հետ:

Գրականություն և դիցաբանություն

Վերհիշում ենք հայոց դիցարանի աստվածներին:

Համադրում ենք հելլենական աստվածների հետ:

Արամազդ	Զևս	ամպրոպի, կայծակի
Անահիտ	Արտեմիս	պտղաբերության
Միհր	Հեփեստոս	ճշմարտության

Վահագն	Հերակլես, Ապոլոն	գեղեցկության, ուժի, ռազմի
Աստղիկ	Աֆրոդիտե	գեղեցկության, սիրո
Նանե	Աթենաս	իմաստնության և այլն:

Պարզում ենք, թե հեթանոսական ո՞ր աստծուն է համապատասխանում Արա Գեղեցիկը:

Հայ դիցաբանության մեջ Արա Գեղեցիկը մարմնավորում է հեթանոս հայերի հավատալիքները մեռնող և հարություն առնող աստծու, բնության զարթոնքի մասին, նրա կերպարը նաև դրվատում է ընտանեկան առաքինությունն ու ողջամտությունը:

Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը ձևավորվել է Ք.ծ.ա. 2-րդ հազարամյակում, հիշեցնում է Օզիրիսի և Իզիդայի, Ադոնիսի և Աֆրոդիտեի (Աստարտե) առասպելները:[2]

Այսինքն՝ ժողովրդական բանահյուսության միջոցով բերնեբերան պատմվել և մեզ են հասել շատ հրաշակերտ ստեղծագործություններ:

Գրականություն և տոմարագիտություն

Հայերը հնում ունեցել են տոմար: Սկզբում, հավանաբար, օգտագործել են լուսնայինը, հետագայում անցել ավելի կայուն՝ արեգակնային տոմարի: Ենթադրվում է, որ հայոց հին արեգակնային տոմարը շարժական էր:

Եգիպտացիների և հայերի օրացուցային տարին իրական արեգակնայինից մեկ չորրորդ օրով պակաս է եղել: Ձեռագրերում պահպանված ավանդության համաձայն՝ հայոց տոմարի սկիզբը կապվել է Հայկի՝ Բելի դեմ տարած հաղթանակի օրվա հետ:Եղել են հին հայկական ամսանուններ, օրանուններ:Օրանունները կապված են եղել հայոց դիցարանի հեթանոսական աստվածների անունների հետ: Յուրաքանչյուր ամսվա 3-րդ օրը կոչվել է Արամ, 8-րդը՝ Միհր, 15-րդը՝ Արամազդ, 19-րդը՝ Անահիտ, 27-րդը՝ Վահագն և այլն, 6-րդ ամիսը կոչվել է Արաց: Այսպիսով՝ հնում ունեցել ենք տոմար, և շատ է կարևորվել հայոց դիցարանը:

[2] Գասպարյան, Դ., Գրականություն 9, Տիգրան Մեծ,Երևան, 2018:

Գրականություն և գրականագիտություն

Հետո փորձում ենք պարզել, թե արդյոք Խորենացին ստուգապատում պատմի՞չ է, թե՞ նաև տիրապետում է խոսքը գեղարվեստորեն և գեղեցիկ շարադրելու վարպետությանը:

Աշակերտները հետևություն են անում, որ Խորենացին հստակ տարբերակում է առասպելն ու պատմությունը, իր աշխատության մեջ ստեղծել է բազմաթիվ տպավորիչ կերպարներ, որոնք առասպելական են և իրական: Չէ՞ որ աշխատությունը գրելիս Խորենացին օգտվել է նաև ժողովրդական զրույցներից և գուսանների երգերից:

Փորձում ենք թեման կապել 6-րդ դասարանում անցած դասանյութի հետ՝ ամրապնդելով ներառարկայական կապերը, և բնորոշել, թե ինչ է զրույցը:

Աշակերտները վերհիշում են, որ զրույցը նկարագրական, պատմողական, խրատական ոչ ծավալուն արձակ կամ չափածո ստեղծագործություն է,որ զրույցները լինում են դիցաբանական և պատմական:

<<Դիցաբանական զրույցները ոչ իրական պատմություններ են, որոնց հերոսները հիմնականում աստվածային ծագում ունեցող անձինք են: Այդ պատումներում լինում են նաև առասպելականացած պատմական դեմքեր, օրինակ՝ հայոց արքա Արա Գեղեցիկը:

....Պատմական զրույցներն իրական հիմք ունեն և պատմական այս կամ այն իրադարձության արձագանքներն են պարունակում:

Երբեմն պատմական զրույցների հիմքում իրականն ու երևակայականը խառնվում են իրար:

Կան զրույցների գեղարվեստական մշակումներ, որոնց , գրական նյութը վերցվում է ժողովրդական բանահյուսությունից>>:[3]

Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներին անդրադարձել, գրական մշակման են ենթարկել և գեղարվեստական ստեղծագործություններ են կերտել տարբեր գրողներ:

[3] Գյուրջինյան, Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, էդիթ Պրինտ, 2012:

Վահան Տերյանը գրել է տրիոլետ, որն սկսվում է հետևյալ տողով.<<Չեմ դավաճանի իմ Նվարդին...>>: Վերհիշում ենք , որ տրիոլետ է կոչվում ութտողանի այն բանաստեղծությունը,որտեղ համընկնում են 1-ին, 4-րդ, 7-րդ և 2-րդ, 8-րդ տողերը:

Նաիրի Զարյան գրել է <<Արա Գեղեցիկ>>դիցապատմական ողբերգությունը:Վերհիշում ենք դրամատիկական ժանրերը՝ ողբերգություն, կատակերգություն, դրամա:

Հովհաննես Շիրազը գրել է<<Գազել Շամիրամին>> բանաստեղծությունը: Վերհիշում ենք՝ ինչ է գազելը. այն երկտող տներից է կազմված, որի մեջ առաջին տան տողերը և մնացած տների երկրորդ տողերի վերջնամասերը կրկնվում են, իսկ դրանց նախորդող տողերը ներքին հանգ են կազմում:

Եղիշե Չարենցը գրել է <<Շամիրամ>> բանաստեղծությունը:(Ստեղծագործությունները տես հավելվածում):Թեմային անդրադարձել են ուրիշ գրողներ ևս. հետաքրքիր թեմա է:

Գրականություն և հայոց լեզու

Միշտ էլ հայոց լեզվի առանձին թեմաների հետ կապված օրինակներն ընտրվում են գեղարվեստական գրականությունից:

Կապելով հայոց լեզվի դասի հետ՝ թեմայի շրջանակում կարող ենք դասագրքում բերված տեքստից գտնել պարզ և բարդ նախադասությունները, հիմնավորել, թե աշակերտն ինչու է կարծում, որ այդ նախադասությունը պարզ է կամ բարդ: Պետք է հիշի, որ պարզ նախադասությունն ունի մեկ ստորոգյալ, բարդը՝մեկից ավելի:Այնուհետև պետք է գտնի նախադասության դիմավոր բայով արտահայտված ստորոգյալները, պարզի,եթե բարդ է, ապա երկբաղադրի՞չ է, թե՞ բազմաբաղադրիչ: Այնուհետև պետք է որոշի բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների՝ միմյանց հետ կապակցման եղանակը՝ համադասական կամ ստորադասական շաղկապո՞վ է կապվել, հարաբերական դերանունո՞վ (շաղկապական բառով),թե՞ առանց շաղկապի՝ շարահարությամբ:

Օրինակ՝

Որոշել, տրված նախադասությունները պա՞րզ են, թե՞ բարդ:

ա) Հաղթությունից հետո տիկինը դիակապուտներ է ուղարկում ճակատամարտի տեղը՝ դիակների մեջ փնտրելու իր ցանկալի տարփածուին:

բ) Կռվի ժամանակ Արայի զորքը ջարդվում է, Արան էլ ընկնում է պատերազմի մեջ Շամիրամի կտրիճներից:

Կարևոր է նաև կետադրությունը:Քանի որ վերը նշված օրինակները կետադրված են, աշակերտը պետք է հիմնավորի կետադրությունը՝ ըստ անցած կանոնների:

Կարելի է նախադասությունները տեքստից դուրս գրել և առաջարկել, որ աշակերտն ինքը կետադրի և որոշի նախադասությյան բնույթը: Օրինակ՝

Կետադրել տրված նախադասությունները:

ա) Այսպիսի լուրեր տարածելով հայոց աշխարհում և բոլորին համոզելով հուզմունքը խաղաղեցնում է:

բ) Բայց երբ դիակն սկսեց նեխել հրամայեց գցել նրան մի մեծ վիհի մեջ ու ծածկել:

գ) Բայց այն վավաշոտ և անառակ Շամիրամը շատ տարիներից ի վեր նրա գեղեցկության մասին լսած լինելով ցանկանում էր նրան տեսնել բայց հայտնի կերպով չէր համարձակվում որևէ բան անել:

Կարելի է նաև անդրադառնալ ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչման դեպքերին և դրանց հետ կապված կետադրությանը: Եթե տեքստում նման օրինակ չկա, ուսուցիչն ինքը կարող է նախադասություններ կազմել:Օրինակ՝

Արան բարոյական էր, Շամիրամը՝ ոչ:

Այսպիսով՝ կարևոր են ներառարկայական կապերը ևս, որոնք ամրապնդում են գիտելիքները:

Գրականություն և աշխարհագրություն

Մովսես Խորենացու<<Հայոց պատմություն>> աշխատությունը հարուստ է ոչ միայն ընդգրկված ժամանակաշրջանի պատմական տվյալների շարադրանքով, կերպարների գեղարվեստական ու հագեցած նկարագրությամբ, այլ նաև աշխարհագրական տեղանունների նկարագրությամբ, դրանց իմաստաբանական բովանդակությամբ:

<<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> զրույցում աշխարհագրական շատ տեղանուններ կան գործածված:

Աշակերտներին կարելի է հանձնարարել գտնել այդ վայրերը, քարտեզագրել, դրանց մասին լրացուցիչ տեղեկություններ հավաքել, մեկ անգամ ևս անդրադառնալ բառերի ստուգաբանությանը:

Արա Գեղեցիկի անվան հետ կապված Հայաստանում այսպիսի աշխարհագրական տեղանուններ կան.

ա) Արագած, որը հրաբխային քառագագաթ լեռ է, գտնվում է հայկական լեռնաշխարհում՝ Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արագածոտնի և Շիրակի մարզերի սահմանագծին: Հայաստանի ամենաբարձր լեռն է: Ստուգաբանվում է հետևյալ կերպ՝ Արա +գահ=Արայի գահ կամ Արա +կաց: Արագած անվան ծագումը կապվում է Հայկի որդի Արամանյակի կամ Արա աստծո անվան հետ: Անվան առաջացման հետ կապված ավանդազրույցներ կան.

բ) Այրարատ, որը Մեծ Հայքի կենտրոնական նահանգն է, նաև Արայի դաշտն է.

գ) Արագյուղ կամ Արայի գյուղ, որը գտնվում է Արագած լեռան արևմտյան ստորոտին.

դ) Արայի լեռ. գտնվում է Արագածից արևելք՝ Քասաղ և Հրազդան գետերի միջև. ավանդության համաձայն՝ Շամիրամի դեմ պատերազմելու ժամանակ Արան բանակել է լեռան ստորոտում:

Շամիրամի անվան հետ կապված այսպիսի տեղանուններ կան.

ա) Շամիրամ ՝ գյուղ Արագած լեռան ստորոտում. գյուղի շրջակայքում պահպանվել է մ.թ.ա. երկրորդ հազարամյակի Շամիրամ քաղաքատեղին՝ իր դամբարանադաշտով:Գյուղը հայտնի է նաև Ասորեստանի թագուհի Շամիրամի այցելությամբ մ.թ.ա. երկրորդ հազարամյակում.

բ) Շամիրամ՝ գյուղ Արևմտյան Հայաստանում՝ Բիթլիսի վիլայեթի Խլաթ գավառակում: Գտնվում էր Բիթլիս քաղաքից 20 կմ հյուսիսարևելյան հատվածում՝ Նեմրութ լեռան հարավային լանջերին՝ սարավանդի վրա:

գ) Շամիրամի սարավանդ. գտնվում է Արագածոտնի մարզում՝ Արագածի հարավային լանջին.

դ) Մենուայի կամ Շամիրամի ջրանցք. գտնվում է Վանա լճի արևելյան ափին.

ե) Շամիրամի կամ Բաբելոնի կախովի այգիները:

Ներկայացված տեղանուններից Շամիրամի ջրանցքը կառուցվել է Մենուա թագավորի օրոք՝ մ.թ.ա. 9-րդ դարի վերջին կամ 8-րդ դարի սկզբին՝Տուշպա կամ Վան մայրաքաղաքին ջուր մատակարարելու համար: Ունի 80 կմ երկարություն:Ջրանցքն այժմ ոռոգում է 25 գյուղերի ցանքատարածություններ ու այգիներ: Ջրանցքի երկարությամբ տեղադրված են 14 ուրարտական արձանագրություններ: Այն խոշորագույններից է ոչ միայն Ուրարտուի, այլև Հին Արևելքի ոռոգման համակարգում:

Ըստ Խորենացու՝ ջրանցքի կառուցումը վերագրվել է Շամիրամ թագուհուն և անվանվել Շամիրամի ջրանցք: [4]

Շամիրամի կամ Բաբելոնի կախովի այգիները փարթամ բույսերով ծածկված արհեստական լեռների շրջապատկեր է, որն ստեղծել է Նաբուգոդոնոսոր Երկրորդը: 50 մետր բարձրությամբ բուրգերին հանգչող կամարների վրա աճեցվել են կախովի այգիներ, որոնց մեջ՝ տարբեր բարձրության վրա, զետեղված են եղել զովաշունչ սենյակներ: Շամիրամի կախովի այգիները հին հույները դասել են աշխարհի յոթ հրաշալիքների շարքին:

Առասպելաբանությունը այն կապում է Շամիրամի անվան հետ: Իրականում Նաբուգոդոնոսոր Երկրորդ թագավորն այն կառուցել է իր կնոջ պատվին:

Անվանում են նաև <<Շամիրամա կախովի այգիներ>>:

Այս ավանդության հետ է կապված նաև <<Արզնի>> տեղանունը, որը գտնվում է Կոտայքի մարզում: Այն այսպես է ստուգաբանվում: Վիրավոր Արային մարտի դաշտից տանում են և հանձնում Շամիրամին՝ ասելով.

— Ա՛ռ, զննի՛ր...

Այսպիսի աշխատանքներ իրականացնելիս կարելի է համագործակցել համապատասխան առարկայի՝ աշխարհագրության ուսուցչի հետ, միասին դասի պլան կազմել, որոշել մատուցման եղանակը: Նման դասերը շատ ավելի հետաքրքրական կարող են լինել, որը կնպաստի աշակերտների համապարփակ աշխարհաճանաչողության զարգացմանը:

---

[4] Խորենացի, Մ., Հայոց պատմություն,Հայպետհրատ, Երևան, 1961:

Գրականություն և երաժշտություն

Խորենացին իր աշխատության մեջ նշել է, որ հնում շատ ավանդազրույցներ պատմվել են երգելով.<<Մենք մեր ականջով լսեցինք՝ ինչպես այն ոմանք երգում էին փանդիռով>>:

Հայկական երաժշտությունը սկիզբ է առել մ.թ.ա. 2-րդ հազարամյակում:Պատմական տվյալները մեզ են հասել Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի աշխատությունների շնորհիվ: Խորենացին հիշատակում է փանդիռ, փող, փմբուկ երաժշտական գործիքները, Բուզանդը՝ թմբուկը, սրինգը, քնարը և շեփորը:

Պահպանվել են մինչքրիստոնեական Հայաստանի երգերի տեքստերի հատվածներ, որոնք Մեծ Հայքի Գողթն գավառի անունով կոչվել են Գողթան երգեր: Հավանաբար դրանք գուսանները երգել են փանդիռով: Բարեբախտաբար, հին հայկական երաժշտական մշակույթի գանձերից թեկուզ մի քանի փշրանք պահպանվել է Խորենացու աշխատության շնորհիվ:

Դրանք պատմում են հայոց և օտար ազգերի աստվածների, արքաների, թագուհիների, արքայադուստրերի, զորավարների և այլոց՝ այդ թվում՝ Վահագնի, Արա Գեղեցիկի, Շամիրամի, Արտաշես թագավորի, Սաթենիկի, Արտավազդի, Արգամի, Տիգրանի, Տիգրանուհու, Աժդահակի, Երվանդի, Սմբատ Բագրատունու և մի շարք այլ կիսաառասպելական և կիսապատմական վիպական հերոսների մասին:

Ղազար Փարպեցին նշում էր,որ հայերը սկզբնապես օգտագործում էին այբուբենի տառերը՝ երաժշտությունը կատարելու համար:

Իսկ ինչպիսի՞ գործիք է Խորենացու հիշատակած փամբիռը:

Հայկական հին թարգմանական գրականության էջերում հանդիպում է <<փանդեռնահարություն>> բառը:

Փանդիռի կիրառման եղանակի, լարերի թվաքանակի և լարվածքի մասին տեղեկություններ չեն պահպանվել:

Կարելի է ենթադրել, որ փանդիռը չորս կամ երեքլարանի նվագարան է եղել:

Մեր օրերում այս զրույցի հիման վրա հայ երգահան Գրիգոր Եղիազարյանը գրել է <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> բալետը:

Այսպիսով՝ գրականությունն ու երաժշտությունը սերտորեն առնչվում են միմյանց:

Գրականություն և տոներ, ծեսեր

Ծաղկազարդ

Այս տոնը հայտնի է նաև Ծառզարդար, Ծառկոտրունք անուններով:

Շարժական տոն է և նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ:

Համաձայն քրիստոնեական եկեղեցու՝ տոնը խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Երբ Հիսուսը, ավանակի վրա նստած, մտնում է Երուսաղեմ, մարդիկ նրա առջև փռում են իրենց զգեստներից, ինչպես նաև արմավենու ու ձիթենու ճյուղեր, որպեսզի ստանան մեղքերի քավություն. ծառի ճյուղերը խորհրդանշել են Հիսուսի փառքը:

Իրականում այս տոնը նախաքրիստոնեական արմատներ ունի և նվիրված է եղել գարնան զարթոնքին, հարություն առնող բնությանը:

Բնության և գարնան պաշտամունքը հայոց հին դիցարանում կապված է եղել Արա Գեղեցիկի անվան հետ:

Արա Գեղեցիկը մեռնող և հարություն առնող բնության խորհուրդն է: Ծաղկազարդն ի սկզբանե նվիրված է եղել նրան և կապված է եղել Կենաց ծառի պաշտամունքի հետ:

Արա Գեղեցիկից հետո հայոց գահն անցավ նրա Անուշավան որդուն, որին կոչում էին Սոսանվեր. պաշտամունքի առարկա դարձան սոսին կամ բարդին:

Ծաղկազարդի նախօրեին եկեղեցում օրհնվում են ուռենու, ձիթենու ոստերը և բաժանվում հավատացյալներին. օրհնված ճյուղերը նաև չարիքից զերծ են պահում:

Այսպիսով՝ գրականությունը ներկայացնում է նաև ժողովրդական հավատալիքները, ծեսերն ու ավանդույթները:

Գրականություն և կերպարվեստ

Գրականությունն ու արվեստի ճյուղերը բարդ զուգահյուսվածքներ են:

Քննարկենք, թե ինչպես են միահյուսվում գրականությունն ու կերպարվեստը: Չէ՞ որ նկարը կարող է վերարտադրել գրողի մտածումը, կերպարների հույզերն ու բնավորության գծերը, խառնվածքը, պահի խորհուրդը, բառերի ոսկին...

Մեկը ներթափանցում է մյուսի մեջ, և թեման ավելի բազմակողմանիորեն է ներկայացվում:

Դասագրքում զետեղված դասանյութերն ավելի ըմբռնելի, տպավորիչ ու հետաքրքիր են դառնում նկարների միջոցով:

<<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> զրույցը ոգեշնչել է նաև շատ նկարիչների, որոնք արվեստի գեղեցիկ և մնայուն ստեղծագործություններ են կերտել: Հիշատակության են արժանի Հակոբ Կոջոյանի՝ Նաիրի Զարյանի գրքի նկարազարդումները, Վարդգես Սուրենյանցի և այլոց կտավները:(Նկարները տես հավելվածում):

Եվ վերջում կուզենայի հավելել, որ դասն ավելի հետաքրքիր և արդիական է դառնում նաև , երբ դիմում ենք ՏՀՏ գործիքներին:

Հետազոտություն

Միջառարկայական կապերի կարևորությունը դասավանդման գործընթացում պարզելու համար անցկացրել եմ հարցում՝ բանավոր և էլեկտրոնային տարբերակներով:

Հետազոտության համար կիրառվել է բանավոր և առցանց հարցում:

Որպես հետազոտության մեթոդաբանություն ընտրվել են քանակական և որակական հարցումներ:

Ստորև ներկայացված են հետազոտության արդյունքները՝



Աղյուսակ 1. քանակական հետազոտության արդյունքները

Ինչպես տեսնում ենք քանակական հետազոտությանը միտված հարցման բացարձակապես բոլոր մասնակիցները տրված հարցին դրական պատասխան են տվել, ինչն անկասկած վկայում է միջառարկայական կապերի կարևորության, ինչպես նաև մասանկիցների իրազեկման մասին:

Հետազոտության որակական տվյալներ ձեռք բերելուն ուղղված հարցամ հետաքրքիր պատասխաններից են, օրինակ՝

ա) Միջգիտակարգային կապերը դասապրոցեսում գործածելու արդյունքում հնարավոր է աշակերտներին ավելի համապարփակ ու ընդգրկուն գիտելիքներ փոխանցել:

բ) Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս զարգացնելու աշակերտների մտահորիզոնը, աշխարհընկալումը, տրամաբանությունը, ինչպես նաև ստացված գիելիքների ճիշտ կիրառում գտնել տարբեր հարակից ոլորտներում:

գ) Չկա այնպիսի գիտակարգ, որ միջգիտակարգային չլինի: Ոչինչ հենց այնպես ինքնին գոյություն չունի:

դ) Անշուշտ կարևոր են:

Ինչպես տեսնում ենք, հետազոտության արդյունքում ստացված կարծիքներն ամրապնդում են մեր՝ դասապրոցեսում միջգիտակարգային կապերի կարևության ու նշանակության անժխտելի հանգամանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Միջառարկայական կապերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս՝

1. ընդլայնելու սովորողների աշխարհայացքը.

2.համակարգելու միջգիտակարգային գիտելիքները.

3. սովորողների մոտ ձևավորելու համոզմունք, որ աշխարհն ամբողջական է, գիտությունները՝ կապված.

4. առարկաներն ուսումնասիրելու հետաքրքրությունը բարձրացնելու, որպեսզի առօրյա կյանքում կարողանան կիրառել կապակցված գիտելիքները.

5. խթանելու սովորողների ինքնակրթության, ինքնազարգացման ձգտումը.

6. զարգացնելու վերլուծական հմտությունները.

7. ստեղծագործական միջավայրում որոշումներ կայացնելու:

Այսպիսով՝ ամրապնդվում են միջգիտակարգային կապերը, ստեղծում ընդհանուր աշխարհաճանաչողություն, ընդհանուր և բազմակողմանի գիտելիքներ, որոնք դասապրոցեսում կիրառելը թե՛ աշակերտներին, թե՛ ուսանողներին ավելի բազամբովանդակ տեղեկություն և տարատեսակ փոխկապակցված գիտելիքներ հաղորդելու հնարավորություն է տալիս, ինչը, հիրավի, նպաստում է նրանց՝ որպես գրաճանաչ անհատների, ձևավորմանը և բանիմաց քաղաքացիներ դառնալուն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գասպարյան, Դ. Գրականություն 9, Երևան, Տիգրան Մեծ, 2018:
2. Գյուրջինյան, Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, էդիթ Պրինտ, 2012:
3. Դասախոսություն, Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում, էլեկտրոնային տարբերակ, URL, https://ru.lektsii/pedagogika/252951:
4. Եկժանովա Ե. Ա., Ինտեգրված ուսուցման հիմունքներ, Մոսկվա, ISBN 978-5-358-0465-1-210:
5. Իշխանյան, Ռ., Պատկերազարդ պատմություն հայոց, Արևիկ, Երևան, 1989:
6. Լեոնով, Ս. Ա., Բոգդանովա Օ. Օ., Չերտով Վ. Ֆ., Գրականության դասավանդման մեթոդիկա, Մոսկվա, Ակադեմիա, 1995:
7. Կոմենսկի, Յ. Ա., Մեծ դիդակտիկա, Երևան, Հայպետուսմանկհրատ, 1962:
8. Կրաևսկի, Վ.Վ., Մանկավարժության հիմունքներ, Մոսկվա, Ակադեմիա, 2005:
9. Մաքսիմովա, Վ. Ն., Միջառարկայական կապերը և ուսուցման պրոցեսի կատարելագործումը, Մոսկվա, Просвещение, 1984:

Հավելված



Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ, Վարդգես Սուրենյանց, կտավ, յուղաներկ, 1899

Աղբյուր՝ https://www.facebook.com/photo/?fbid=3537985242895263&set=a.3537970006230120

Շամիրամի հանդիպումը Նուարդի հետ, Հակոբ Կոջոյան, թուղթ, ջրաներկ, 1945

Աղբյուր՝
http://www.gallery.am/hy/database/item/11318/?fbclid=IwAR2bQ_L2rrpRkRLIraQfpkjvdi_HRGzSqHlsHqDXKFK0hn4VKUmjr8owDOY

Նինոսի ձերբակալումը Շամիրամի հրամանով, Հակոբ Կոջոյան, թուղթ, մատիտ, 1945

Աղբյուր՝ http://www.gallery.am/hy/database/item/1155/?fbclid=IwAR1vBLIlG9iod-rUtxYjLPrsmksq-wnk5ydgOfCWxeC5nZ8E8m5vYyzf17c

Փանդիռ (փանդիռն, փանտիռ, փանդեռն, բամբիռն, բանդեռն, բանդիռն)

Լարային կոթավոր կսմիթահար նվագարան հին և միջնադարյան Հայաստանում

Չեմ դավաճանի իմ Նվարդին

Վահան Տերյան

Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյութես, օ՛, Շամիրա՜մ.
Որպես արքան այն՝մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ զոհ-սրտին,
Որքան էլ փայլըդ փայե նրան
Չեմ դավաճանի իմ նվարդին,
Որքան էլ դյութես, օ՛, Շամիրա՜մ:

Աղբյուր՝ https://hy.wikisource.org/

Շամիրամ

Եղիշե Չարենց

Իրիկնային փողոցում ես տեսա նրան:
Նա — սևաչյա պչրուհի[1], գուցե — Շամիրամ:

Եվ ինձ տվեց հինավուրց հուռութները[2] նա,
Երկու համբույր — փողոցում, մայթերի վրա:

Եվ հմայեց ու տարավ նա դղյակը հին:
Լապտերները ժպտալով ճանապարհ դրին:

Եվ, չնայած որ անթիվ դարեր են անցել՝
Նո՜ւյնն է երազը նրա, լոկ մարմինն է — ծեր:

Նո՜ւյնն է խոսքը, կարծես նոր տրվող աղջկա,—
Միայն մարած աչքերում էլ հրդեհ չկա:

1. պչրուհի — պչրասեր կին. պչրանք — զարդարանք, հարդարվելու զարդեր. փխբ. զարդ, գեղեցկություն:
2. ↑ հուռութ — հմայություն, հմայանք, կախարդություն. սնոտ. հմայությամբ չար աչքից՝ փորձանքից ևն. պահպանող իր, որ մարդիկ կրում են իրենց վրա, համայիլ:

Աղբյուր՝ https://hy.wikisource.org/